

քին կեզրոնը կը գտնուէր մարդաչափ բարձրութեամբ տեսակ մը պղինձէ աշտարակ: Հոն էր որ կը պահուէր այն նուիրական փոշին, զոր ուխտաւորներուն կը բաժնէին, իբր Քրիստոսի կողմէ կոխտուած փոշի մը և որ մշտապէս կը կրէր Անոր քայլերուն դրոշմը: Այն նշխարները բաշխողը արեւմտեան կողմը հաստատուած փոքր դուռէն կը մտնէր այս պղտիկ շէնքին մէջ և թանկագին մասունքը կը դնէր ա՛յն ձեռքին մէջ զոր ուխտաւորները կ'երկարէին աշտարակին վերև բացուած ծակէ մը (P. P. V. A. հատ. Բ. էջ 397-8):

Յովհաննէս եպօ. Երուսաղէմացի Համբարձման տաճարին համար սա տողերը ունի. «էր սա յառաջագոյն յոյժ փառաւոր եկեղեցի և յայտնապէս հրաշագործ. և յորժամ այլազգիքն առին զսուրբ քաղաքս՝ նախ զայս եկեղեցին քակեցին և իւրացուցին զնա. և սակայն ի մէջ եկեղեցւոյն գոյ տակաւին կաթողիկէ գմբէթ մի քարաշէն և զեղեցկարհեստ, և ունի շուրջանակի կամարս և սիւնս մարմարեայ: Եւ ի մեջ զընթեքին զոյ սակաւին ֆարև ոսկւսեղիև Քրիստոսի, ուսի երեւի նշան ոսից փրկչիև մերոյ. սա՛ս Տիրուհի Կոյսն՝ քաղաքս անգամ եկեալ երկրպագիր (Հան. էջ 275):

6. Քրիստոսի ոսկերուն հետքի աւանդութիւնները.

— Քրիստոսի Համբարձման ժամանակ Անոր ոտքի հետքերը հողին վրայ ներտպուած էին. շատ անգամ ումանք նոյն հետքերը եղծած են, բայց անոնք ա՛լ աւելի գեղեցիկ ինքնիրեն նկարուած կը նորոգուէին:

Մարինոս կը գրէ թէ այս եկեղեցին ամբիֆ չուներ, վասնզի չէին կրցած վարպետներն ոսկւսեղիին վրայ ծածկոյթ շինել, ինչպէս կը վկայեն Յերոնիմոս եւ ուրիւնք (Մար. Ա. հատ. էջ 336):